կողները, որոնք ինը հարիւր հոգիի սպասարկելու համար իրապէս մեծամբոխ բանակ մը ըլլալու էին։

Ուրիշ հայ պատմիչ մը, Եղիշէ, մեծարժէք վկայութիւն մը ունի մեր նիւթին շուրջ։ Ան խօսելով Պարսկաստան ակամայ գերեալ հայ նախարարներու եւ եկեղեցականներու մասին՝ կը պատմէ թէ ինչպէս անոնք կը հիւրասիրուէին մոդպետէն, վայելով ճաշեր եւ խնճոյքներ, եւ սակայն այդ ուրախութեան միջոցին իսկ «ի ժամ բազմականացն կարծիք իմն եղեն ի միտս սրբոցն վասն երիցու միոյ՝ որ էր ընդ նոսա ի սուրբ կապանսն. զի ի մէջ չինական մարդկան կեցեալ էր, եւ տգիտազոյն եւս էր ի գրոց մխիթարութենէ։ Հրամայեցին ունել զգլուխ բազմականին. եւ պատասխանի երանելին եւ ասէ. — Զի՞նչ է այդ գոր դուքդ գործէք. եւ կամ յինէն զի՞ թաքուցանէք զծածուկս խորհրդոցդ։ Ես քան զկրտսերս ձեր խոնարհագոյն եմ, եւ քան զեւս փոքունս յաշակերտաց ձերոց տգիտագոյն եմ. զիա՞րդ կարացից այդմ տանել։ Այս իսկ մե՛ծ էր ինձ, զի սուրբ կապանաց ձերոց հաղորդեալ եմ այսօր։ Եթէ արժանի համարիք ձերում սեղանոյդ, կալարուք դուք զիւրաքանչիւր տեղի բազմականիդ, եւ հրամայեցէք ինձ զիմ տեղին։ — Եւ բռնադատեաց մեծ եպիսկոպոսն Յովսէփ միաբանութեամբ ամենայն սրբոցն, եւ ի վերոյ քան զամենեսեան բազմեցուցին զնա»։

«Եւ իրրեւ բոլորեցաւ ակումբ բազմականին, եւ հաղորդեցան ամենեքեան ի կերակուրն զուարթութեամբ»(25)։ Գեղեցիկ խոնարհամտութեան պատմուածք մ՝է Եղիշէի պատմածը։ Մենք հոն կը գտնենք խումբ մը մեծատուն հայեր, որոնց կ՝ընկերանան հայ եկեղեցականներ եւ վերջիններուն կարգին նաեւ համեստ քահանայ մը, Պարսկաստանի մէջ արդելափակ՝ ի սէր իրենց Քրիստոնէական կրօնքին։ Իրարու հանդէպ իրենց եղբայրական սիրոյ արտայայտութեանց կարգին անոնք խնճոյքի մը ժամանակ կը նկատեն համեստ քահանան առանձին եւ հեռու իր ազգակիցներու ազնուական խումբէն։ Ազնուականները միախորհուրդ կ՝ուզեն որ քահանան իրենց սեղանին գլուխը

(25) Թիֆլիս, 1904, էջ 222–223։ Ողբացեալ ճարտարապետ Թորոս Թորամանեան նկարագրելով Շապին Գարահիսարի «մեծ տուն չինող հարուստներ»ու հարսնիքներու եւ ուրախական խնճոյքներու ճաշասրահը. «Բազմոցին (փայտաշէն) ամբողջ երկայնութիւնով կը փռուէին խոտով կամ բուրդով լեցուած ներքնոցները բաւական զգալի թանձրութեամբ, որուն մախաթ անունը կու տային։ Ներքնոցներուն վրայ կը փռուէին թանկագին գորգեր յատկապէս բազմոցներու իւրաքանչիւր կողմին լայնութեան եւ երկայնութեան չափով գործուած, այնպէս որ բազմոցին հորիզոնական լայնութիւնը ծածկելէ յետոյ պէտք էր մէկ մասն ալ վար կախուէր, մինչեւ սրահի տախտակամածը՝ բազմոցին տախտակէ ճակատը ծածկելու համար։ Գորգերը փռուելէ յետոյ չուրջանակի կը շարուէին թանկագին մետաքսեղէն կամ այլ... բարձեր պատերուն յենուած ուղղահայեաց ձեւով։ ... պատուոյ կամ ասպիճանի համեմատ կը շարուէին ծալապատիկ կամ ծնկաչոք հանդիսականները ամբողջ բազմոցներու երկարութեամբ։ ... յետոյ կը բերուէր ճաշի մեծ սեղանը ընդհանրապէս բոլոր. սեղանի լայնութիւնը կամ տրամադիծը քիչ պակաս էր բազմոցներու մէջտեղ մնացած դատարկ միջոցէն։ Սեղանը կազմուած էր մի չարք մաքուր տախտակներէ որոնք միացած էին իրարու ծխնիներով եւ ի հարկին կը ծալլուէին»։ (Արարատ. — Գուէնոս Այրէս, 1845, Յունուար, էջ 242։ Հայաստանի Արքունական եւ Իշխանական Ապարանքները եւ անոնց ներքին կենցաղը)։